ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

---

« 08 » հոկտեմբերի 2018 թ. N 239-Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԻՆԱՐ ԳՅՈՒՂԻ ԱՐԾՐՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԻՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՈՎԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՍԻՄԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 171-րդ հոդվածի 5-րդ կետի, 176-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Միհրանուշ Սահակյանի դիմումը՝

կարգադրում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Միհրանուշ Սահակյանին 2018 թվականի հոկտեմբերի 15-ից հոկտեմբերի 26-ը ներառյալ տրամադրել չվճարվող արձակուրդ:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների իրականացումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Սիմակ Մելքոնյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման համաձայնությամբ/:

3. Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի հոկտեմբերի 27-ից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք.Գավառ